



## Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

### ՄԱՅՐ ՍԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեռևս 5-րդ դարի սկզբին երբ Հայատապնդում թիմնադրվում է դպրությունը, գիտության բազմաթիվ ուղղությունների հետ մեկտեղ զարգանում է նաև հայենագիտությունը, որը միահյուսված ձևով հանդիսական մեր պատմագիտության մեջ: Դեռ ավելին՝ մեր պատմիշներն իրենց երկերում աշխարհագրական և պատմական տեղեկություններ են տալիս ոչ միայն Հայատապնդի, այլև դրացի երկների ու ժողովորդների մասին, և դրանով որոշ աշխատությունների արժեքը դուրս է գալիս Հայատապնդի՝ պահմաններից, դառնում համամարդկային՝ հարուստ հյութ մատակարարելով արևելագիտությանը:

Աշխարհասիյուն հայ ժողովուրդը մայր ցամաքի տարբեր կողմերում և ժամանակաշրջարում հաստատել է տպարաններ ու հրատարակել մեր մատենագրության անգին գոհարներ, գիտության, մշակույթի և քաղաքակրթության վերաբերյալ բազմաթիվ և բազմանուն աշխատություններ, որոնք իրենց տեսակի մեջ հետաքրքիր են ու արդիական ոչ միայն մեզ, այլև օտարերի համար:

Երշանկարիչառակ Սիմեոն Երևանցի կառողիկոսի շանքերով 1771 թվականին Սայր Աթոռում հաստատված տպարանը իրավամբ դառնում է Սայր Հայատապնդի մշակութային օրբաններից մեկը, որն իր գոյության շուրջ

150 տարիների ընթացքում մեծ ու ամենահայտնի ծառայություն է մատուցել նայ տպագրության շնորհակալ գործին: Այդ ժամանակաշրջանում բազմաթիվ հրատարակությունների կրողին լույս են տեսնում նաև հայունագիտական բնույթի մի շարք աշխատություններ, որոնց թիվը մոտավորապես հասնում է երեսում: Խոկ անցյալ դարի երկրորդ կեսին այստեղ հրատարակում է «Արարատ» հայագիտական ամսագիրը, որի Էջերում մեծ տեղ է տրվում հայրենագիտությանը, լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ: Սակայն մեր հոդվածի հյույթը առանձին գրքերով լույս տևած հայենագիտական հրատարակություններն են, որոնցից մի քանիսի մասին համառոտակի կիսուներ ստորև:

Ցարդ մեզ հայտնի մատենագիտական ցուցակների<sup>1</sup> զննումից պարզվեց, որ Սայր Աթոռի տպարանում մինչև 1842 թվականը հայրենագիտական որևէ աշխատություն չի հրատարակվել. այս շրջանում լույս ընծայված գրքերը մեծամասամբ աստվածաբարա-

<sup>1</sup> Տես Հայ հմատիա գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800), Երևան, 1963; Տես նաև Հ. Դավթյան, Հայ գիրը 1801—1850 թվականներին, Երևան, 1967;

նական, դավանաբանական և հայագիտական բնույթի են:

Հայրենագիտական առաջին գործը, որ  
1842 թվականին լույս է ընծայվում Վաղար-  
շապատի տպարանում, Մայր Աթոռի միա-  
բան Հովհաննես Եպիսկոպոս Շամիառամբ-  
յանցի «Աստրագրութիւն կաթողիկէ Հջմիած-  
ին և Ամենա գաւառացն Արարատայ» երկիս-  
տորանոց շահենկան աշխատովյան է, որը  
մինչև այսօր էլ ուսանելի է ընթերցողների  
համար:

Գիրք գրելու շարժանիթը եղեկ է հետևյալը. Իշխան Ղորղանյանի տանը հեղինակը կարդում է հայր Ղուկաս Խնճիջյանի ստորագրությունը (Ընկարագրությունը) Հիմ Հայաստանի Ալյարատ աշխարհի մասին, նկատում մի շաբաթ թերություններ, և նրա մոտ միտք է հողանում ստեղծել ավելի կատարյալ մի գործ, տալ ճշմարիտ պատկերը սույն աշխարհի:

Սուաջին Բատորի մինչև 258 էջը ականա-  
տեսի աշքերով, պատմական ստուգ փաս-  
տերով և առևնայն մանրամասնությամբ  
խոսվում է Մայր տաճարի մասին ընդհան-  
րապես, իսկ գործի երկրորդ բաժինը նվիր-  
ված է Վաղարշապատի մյուս շորս եկեղե-  
ցիների նկարագրությանը:

Աշխատովան երկրորդ հաստիք Ալբարտյան երկրի աշխարհագրական պատկերն է, նրա լեռների, գետերի, տեղի ունեցած երկարաժերի, գյուղերի, օդի, եղանակի, եկեղեցիների, դրանց մեջ եղած ծեռագրերի, պատմական հուշարձանների և այլնի մասին։ Հեղինակը տեղ-տեղ դուրս է գալիս ուսումնասիրիոյ հյուրի սահմաններից և Ալբարագրում նաև դրացի գավառների պատմական հուշարձանները։

Հայաստանի առանձին աշխարհների սուրբության ասպարեզում Շահիալունյանց եսիսկոպոսի՝ այս երկրորդ հաստրը անզոգական մի գործ է մեր հայրենազիտության պատմության մեջ:

1870 թվականին լուս է տեսնում Արևարքապիսկոպոս Միհրաբյանցի «Պատմութիւն Հոռոմոսի վանոց ի Ծիրակ» գրքույթը, որի առաջարանում հեղինակը հայունում է, որ պետք է նկարագրի նաև Մարմաշենը և Արագած լեռնա արևմտյան լանջերի տեղաբնի ու պատմական հուշարձանները, որոնց վերաբերյալ, ըստ իրեն, թիշ տեղեկություններ կան մեր պատմիչների մատյան-Շառում:

Գրի առաջին 25 էջերում նա մանրամասնորեն նկարագրում է Հոռոմոսի վանքը իր ամբողջության մեջ, իսկ երկրորդ բաժնի 1—19 էջերում խոսում է Մարմաշեմի և իր ծրագրած վայրերի մասին: Ուստինահրության վերջում կան նետեալ մերձագորեր՝ «Տեղա-

գրոթիմն Աւոկիդյան անուանեալ գեղշ» (Եշ 19), «Տեղագրույիսն Մակարայ կոչեցեալ վանոցն» (Եշ 21), «Տեղագրույիմ կաթու-լիկէ եկեղեցոյն Թալճայ» (Եշ 28), «Զար-նընի գիղ» (Եշ 30), «Մազարաջոյ գիղ» (Եշ 33), «Տեղագրույիմ կաթուլիկէ եկե-ղեցոյ Արտա աւանի» (Եշ 34): Գրքի լեզուն  
գրաբար է:

U.S. GOVERNMENT

1998-1999

L 563

#### **‘LITERATURE’ IN PERSPECTIVE**

Վ. Հայաստանի թագավորութեամբ Հայոց անձնա-  
կանակութանի շահի խաթունեանց շահքի-  
արցույ միաբանի սրբոյ Խամբածոնի

*—John G. Neihardt*

SPP 1324

www.jomr.org

Հայութեա կի հայութա կաթու զի կոսի մա հայութ  
է Հայութա կարք ցոյ և զանազան Նշանալիքի  
Տերութեանն Առաջա

• 11 • 11 - 12 - 13 - 14 - 15 - 16 - 17 - 18 - 19 - 20

$1242 \approx -S_2 -$

Ստորագրութիւն Կաթողիկէ Եջմիածնի.....  
ա. Եջմիածն, 1842 թ.

Պետք է հցել, որ Բայրունագիտական աշխատությունները Մայր Աթոռի տպարանում ավելի շատ լույս են տեսել 1870-ական թվականներին. սա կանխավ մոտաված բայլ է, թե պատահականություն, չենք կարող ասել, միայն թե մեզ հայտնի գրքերի մեջ այս բանը ակնքախ է:

1871 և 1873 թվերին աշխարհագրական երկու գրքեր են հրատարակվել ս. Գեղարդի և Երա տեղանքի մասին։ Առաջին գրքի հեղինակն է տ. Վահրամ Եպիփառպու Մանկունը, իսկ երկրորդինը՝ տ. Ստեփանոս Վարդապետ Միհթարյանը։ Երկու գրքերն են

գրված են արևելահայ աշխարհաբարով և մատչելի են ընթերցողի համար: Մանկունի եպիսկոպոսի գիրքը վերնագրված է «Սլրի-վամբ կամ Գեղարդայ վաճե»՝ բաղկացած 55 էջից: Գրքի վերջում նեղինակը նկարագրում է նաև նշանավոր Հավուց թառ մասսատան:

Ընդգրկման ծավալի և հայրենացիտական առումով ավելի նշանավոր է Ստեփանոս վարդապետի «Ստորագրութիւն հոչակատը մեծի ուխտին Արքի վաճուց սրբոյն Գեղարդայ» 124 էջանոց աշխատությունը, որը գրված է հայրենացիտական մեծ շնչով, ավելի ընդարձակ տեղեկություններ է տալիս տեղանքի մասին, զնամնատում է հայ ճարտարապետական այս հոյակապ հուշարձանը, զրա մասին մեջքերումներ է անում մեր պատմինների աշխատություններից և օգտագործում արխիվային մի շարք փաստեր մասսատանի նվիրատունների մասին:

Գրքի առաջարանը գրել է Արքար Ս. Գուլամիրյանը, որը բարձր է գնահատում մեր նախնինների կառուցելու, ստեղծելու խելացի կրթերը:

Խնկ հեղինակը իր առաջարանում գրում է: «Եթէ ինն ազգ լինելուրու համար կը պարծիմք՝ մեր պարծանաց ամերկնան յայտնի վկայքն մեր նախնի վերափառ տերանց և դիցազն պայազատաց շնաշխարհիկ պանծալի գործերն են, բազմաթի հոյակապ մենաստաններն են, հրաշափառ աստուածային տաճարներն են, անթի և անհամար փառամել շենքերն են... Սակայն կուգայ մի ցանկալի օր,—գեղեցիկ կանխատեսությամբ եզրակացնում է հեղինակը, —որ ազգը իր սուրբ հնութեանց արժեքը ճանաչելով՝ մի մեծազօր հրաշագործ ծեռք, դարաւոր ժամանակաւ փոշով ծածկուած այն աննշան կարծուած քարերն անգամ արամանդի վերածել, և նոցա տղմերն սրբելով յուկեփառութիւն վերստին հասցնել» (Եջ ԺԹ—ի):

1874 թվականին լույս է տեսնում Արել արքապետու Միխիարյանցի «Վաղարշապատ. քաղաքամայր Հայաստանի» 75 էջանոց աշխատությունը, որի առաջարանում նշված է, որ մեր երկիրը գեղեցիկ է, ունեմք հարուստ մշակույթ, արժեքավոր կառուցներ, սակայն դրանք անհնամ, ավերված վիճակում են, ուստինական կառուցներու կարու:

Սույն գիրքը գրվել է մետսնայ նպատակով: «Ո նախագիտելիս աշխարհագրական ըննութեան մերոյ յառաջ բերինք նախ՝ այն սիսալ տեղեկութիւնները, զորոնք առանց ականատեսութեան մեր Աշխարհի վրա տուել են Ազգին ականատը արդի մատենագիրներէն ոմանք իրենց գրուածոցը մէջ» (Եջ Դ), կամ «....որպէս զի ընթերցողը ճիշտ գա-

ղափար ունենան Արարատեան նահանգի վրա, առաելավէս այն մեր ազգայինը, որոնք տեղեաւ և երկրա Հայաստանէն շատ հետի են և միայն այն գրուածներին են ապատան» (Եջ Զ):

Արել արքապետու քննադատում է մի շարք հայ և օտար հեղինակների թյոր կարծիքները Հայաստանի Արքարատ աշխարհի վերաբերյալ, և գտնում, որ նրանց ստորագրությունները երբեմն չեն համապատասխանում իրականությանը, աշխարհագրական որոշ անուններ շփոթում են և խառնում իրար:


Այս գիրքը թերևս մեր հյութին գնացող ամենահարմար ուսումնասիրություններից է, որն ունի այսպիսի ենթավերնագրեր և որոնց տակ հեղինակը մասնագետի հնությամբ և ալկանատեսի աշքերով սպառիչ բացատրություններ է տալիս. ա) «Արարատեան նահանգի ընական աշխարհագրութիւն», բ) «Դիրք Արարատեան նահանգի», գ) «Արարատեան դաշտին շրջապատ լեռները» և այլն:

Գրքի 53—75 էջերում հապանցիկ կերպով հեղինակը ի սկզբանե մինչև իր ապրած ժամանակաշրջանը նկարագրում է Վաղարշապատ քաղաքի վերանորոգությունները, շինությունները, դիրքը, շրջապատը և այլն: Խնկ 1875 թվականին Արել արքապետու քրատարակում է իր «Կաթողիկէ Մայրեկեցի Վաղարշապատա», ընդ շորից վանօրէն Առինքն 56 էջանոց գրքովիկը, որը համարել է նախորդ գրքի շարունակությունը և անվանել հատոր Բ: Այսուղե նա հիմնականում նկարագրում է Վաղարշապատի մնացած չորս նկեղեցիները (ս. Հոփիսիմե, ս. Գայանե, ս. Շողակաթ և ս. Աստվածածին): Հեղինակն առաջարանում գրում է, որ թեև Շահնարարունաց եպիսկոպոսը դրանց մասին իր ստորագրության մեջ խոսում է, սակայն զրա նկարագրություններ հետո այդ եկեղեցիներում կատարվել են շինարարական և վերանորոգման բավական մեծ աշխատանքներ, որոնց մասին ել նաև շարադրում է իր գրքովիկում:

Իր տեսակի մեջ հետաքրքիր մի ձեռնարկ է 1873 թվականին Վաղարշապատու տրպաված «Դասագիրը բաղդատական աշխարհագրութեան» ուսումնասիրությունը, որը գրել են Պետերուրդում սպվորող հայ ուսանողները: Այս 264 էջանոց գրքում փորանակի տեղեկություններ են տրված աշխարհի բոլոր երկրամասերի, օվկիանոսների և ծովերի մասին, զրանց դիրքի, կիմայական պայմանների, բուսական ու կենդանական աշխարհի, օգտակար հանածների և այլնի մասին: Գրքի 101 էջում «Ասիական Տաճակատան» վերմագրի տակ 102 էջից խոս-

վամ է նաև Հայաստանի մասին: Գիրքն իր տեսակի մեջ, որպես զուտ աշխարհագրական ձևոնարկ, այն էլ ողջ աշխարհի վերաբերյալ, առանձնահատուկ և շահելիան մի գործ է ժամանակի հայկական դպրոցների աշակերտության, ինչպես նաև ընթերցաներ լայն հասարակության համար:

մնացորդը» (էջ Ա): Իսկ առաջարանի վերջում ավելացնում է, որ ինչ-ինչ պատճառներով չի կարողացել «...կցել սորա թես պեսր եղածին չափ տոհմագրական և բանափրական տեղեկություններ այս գաւառի սակաայի գիրօրէից բնիկ գաղթական բնակչաց վերայ» իր ուսումնասիրությունը: Նա նկա-



Մայր Աթոռի տպարանի հայրենագիտական հրատարակություններ

Հայրենի եզրքի մի գեղեցիկ նկարագրություն է՝ Արհատակես վարդապետ Սեղրակյանի «Հնութիւններ հայրեննեաց ի գաւառին Երնջակայ» 176 էշանոց աշխատությունը, որը լույս է տեսել Վաղարշապատում, 1872 թվականին: Հեղինակը, դուրս գալով իր նյուի սահմաններից, նկարագրել է նաև Երնջակի հարեւան գալաքները, ատեղծել շահելիան և մեայուն աշխարհագրական մի գործ: Գրքի հայրենաշոնչ առաջարանում Արհատակու վարդապետը ողբում է մեր ավերված և կիսակրծան տաճարների վրա, որոնք, ի տև բոլորի, քանդվում են, ավերվում, հավասարվում ենին: Նա պարզապես ահազանգում է ժամ առաջ եթե ոչ վերանորոգել, գունե նկարագրել դրանք, հավաքել, ի մի քերել, ցուց տալ մեր ժողովրդին, ինչպես նաև աշխարհի բաղաքակիրթ մարդկությանը, որ հայր մշակույթ ունի, ինչ ու աշխատանք ժողովրդի է: Նա գրքի առաջարանում գրում է. «Եթ յիրահի ի՞նչ կայ երկրի վերայ հայկացող սրտի համար առակ փարելի և նուիրական, քան հայրենիք, և ի՞նչ կարող է նորա դաման վիրաց ու բազմադաշտան մղկացուցիչ խոցերու հանդեպ առելի գագալի թուիլ, եթէ ոչ սիրում հայրեննեաց պամանակի կամ ուրաքի հնութեանց նշխարեալ

բազրում է Երնջակ գավառի սահմանները, լինները, դաշտերը, գետերը, բերքը, օգտակար հանածոնները, կիմայական պայմանները, բուսական, կենանական աշխարհը, գյուղերը, վանքերը, մենաստանները, դրանց մեջ եղած ձեռագործերը, մասումքները, գերեզմանները և մի խոսքով առնեն ինչ: Զնայած նրան, որ յուրաքանչյուր ներակերնագորի տակ թիշ է խոսում, ասկայն նրա ուսումնասիրության ընդգրկումը շատ լայն է ու ամբողջական, դրա համար էլ գիրքը արժեքավոր է և մի գեղեցիկ հուշարձան Սրբնաց աշխարհի Երնջակ գավառի:

1886 թվականին լույս է տեսնում զինվորական և բաղաքական գործի, հաղպատեցի Ռուսուն թեկի Երգնելիքացի «Հնախօսական տեղագրությունն Հայրաստայ աշխարհամոչակ վահից սրբու Նշանի» արժեքավոր գիրքը, որի շապեկի վրա հեղինակը զետեղել է հետևյալ խոսքերը. «Հնախօսութիւնն լուսաբնում է ազգի անցեալ պատմութիւնն, որ հասնում է մեզ մատենագրութեամբ, մնացեալ լիշեցուցանող դեռ անշինչ արձանագրութեամբ և մերձակայ ժողովրդական աւանդութեամբ: ...Նորա մեծ ծառայութիւն արած կիմնեին ազգին և գրականութեան, եթէ հոգալին մեր մնացեալ լիշտակարաններն ամբողջութեամբ պահ-

պանել. և ջանային հնութեանց նկարագիրներն և արձանագրութիւններն ընծախ ազգի բանաստեղին ազգի անցեազ պատմութիւնն նշակելոյ Բամար» («Մեղմ Հայուստանի», 1875 թ., № 57):

Հայրենասեր Բեղիմակը, խորն ըմբռակով վերոնիշչալ խոսքերի բովանդակությունը, ձեռնամուս է լինու սույն աշխատությունը գրելու շնորհական գործին և մաս առ մաս տպագրում «Արարատ»-ի մեջ, իսկ այսուհետեւ մեկ Բրատարակում է առանձին գրքով:

Իր ժողովրդին օգտակար լինելու գեղեցիկ գացումը Ռ. Երգևկանցին ստիպում է թողենի զինվորական ծառայությունը և գալ Հայուստ, մանրազնին ուսումնասիրել տեղի կառուցմանը, նրանց արձանագրությունները, մեր մատյաններում եղած հիշատակությունները այս նշանավոր համալսարանի մասին և բրտնաշան աշխատանքով ստեղծում է այս օգտաշատ գիրքը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, երբ նա սույն գրքի առաջարանում գրում է. «Ճի՞ր որ ծնեալ յաշխարին, եթէ ոչ վասն օգտի Հայրենեաց»:

Գրքում Բեղիմակը պատմական հավաստի փաստերով ի սկզբանն նկարագրում է Հայուստի նշանավոր վանքը և նրա համակառուցմանը ընդհանրապես: Գրքի լեզուն գրաբար է, այն թաղկացած է 181 էջերից:

1894 թվին Մայր Աթոռու տպարանում լույս է տեսնում Ս. Հայկունու «Բագրենանդ ջրարաջն գաւառ» հայունի աշխատությունը, որը իր մեջ բովանդակում է հայրենագիտական և ազգագրական հարուստ նյութեր Այրարդան աշխարին Բագրենադ գավառի և նրա շրջակա մի շարք վայրերի մասին:

Գրքի առաջարանում, որը մի ուղերձ է Խրիմյան Հայրիկին ուղղված, Բեղիմակը սրտի ցավով է խոսում, թե ինչպես օստարենու բանիում են մեր շենքերը, վտարում ժողովրդին իր տնից, դառնում նրա արդար վաստակի տերը: Հայ ժողովրդինը բունել է գաղոյի՛ ճանապարհը, ամենուր թշվառություն է, հայորիները անուն ու անորի են, որոնց միջն օգնել է, հաց տվել Հայոց Հայրիկը: Հայկունին իր այս գիրքը գրում է արդ բազմաթիվ անսունի և անորի հայու զավակների «...միտիարական ճայնը մշտառեկ պահելու», «մշտախոս մի արձան կանգնեցմելու համար» (Էջ 4): Գրքի ԺԲ էջում «Առ՝ յարգելի ընթերցող» վերնագրի տակ իր կատարած գործի մասին ասում է. «...Սորու մես ներ կնքալ կնքալին՝ որ բուն Ալաշկերտի պատկերն նանրամասն ընթերցողի առաջ դրած եմ. ոյնիւ դուրս եղած գաւառներու, այն է՝ Գարաքիլիս, Խչքիլիս, Տիատին, Մաղկուտ, Անդար գաւառակներու վերայ մասնադիր խօսած եմ, որը Բագրենանդայ կը պատկանին, և յորմ դուրս գալու ակնարկ

մի ևս ձգած եմ Մանագլերտի վերայ, Կապոյու պատմական վայրի և Բագրենանդէն այլ և այլ գաւառները անցնող ճանապարհներու վերայ»:

384 Էջանոց իր այս գրքում Հայկունին խոտում է Բագրենանդ գավառի խոնմերի, լուսաշիշամերի, կիրճերի, քերդերի, գետերի, գետակների, լճերի ու լճակների, ճանապարհների, տարվա եղանակների, գյուղերի, անտառների, գերեզմանների, եկեղեցների, սրբագրանների մասին:

Գրքի վերջին մասը ազգագրական բնոյրունիքի, որտեղ Բեղիմակը խնամքով ներկայացնում է իր Արարագրած վայրերի հայ ժողովրդի վարքը ու բարքը և տեղի բարքունիք գետերել է մի շարք ներիաթեների ու պատմվածքների հմուշներ, որոնց մեջ ճշմարտացիորեն արտացոլված է տեղի բնակչության կենցաղն ու սովորությունները:

Հայրենագիտության մի անմաս կորող է հանդիսանում մեծահամբավ գիտնական, Մայր Աթոռի միաբան Մեսրոպ արքեպիսկոպոս Մերաբյանցի «Տեղագիր Գեղարքունիք ծովագարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ» 843 էջանոց ստվարածավալ աշխատությունը, որը լույս է տեսել 1896 թվականին: Գրքի առաջարանում Բեղիմակը նշում է, որ շնարած իրենց ստորագրություններում Հովհաննես ենս. Շահիաթունյանցը, Մարգիս արքեպահ. Զալարյանցը, Զաբարիս ենս. Գյուղապայանցը և Մանեկ վրդ. Գյուղուշանեցին տեղեկություններ են տվել այս գավառի և նրա մերձական վայրերի, պատմական հուշարձանների մասին, այնուամենայնիվ կարիք է զգացվում նոր լույսի տակ, արդի գիտության պահանջներին համապատասխան մի նոր աշխատություն գրել: Եվ ինկապես, գիտնականը իր այս խոտմանը և սկզբունքին հավատարիմ մնալով ստեղծում է սույն շահեւկան աշխատությունը, որի մեջ տեղադրել է նաև պատմական որոշ հուշարձանների զծանկարներ, բազմաթիվ սեպագիր արձանագրություններ, որոնք նա տարրեր ժամանակներում հավաքել է Հայաստանի տարրեր շրջաններից և ուղարկել անվանի կովկասագետներից՝ դրանք վերծանելու համար: Գրքում կամ նաև Գեղարքունիքի գավառի եկեղեցներին պահվող ձեռնագրերի ցուցաները, նրանց Ակարակիությունները և այլն:

Մանկավահժական յուրահատուկ հայութակով, դպրոցական նարիքին երեխանների՝ մակարդակին հանապատասխան ոճով և մարդու հայերենով է գրված Սույան Սույամյանցի «Տեղագրութիւն Երեւանի» 48 էջենոց պիրույնից, որը լույս է տեսել 1899 թվին:

1914 թվականին հրատարակվում է Ս. Կանայանցի «Անհայտ գաւառներ» Հին Հա-

բառանի» աշխատությունը, որով հեղինակը ցանկանում է ճշտել որոշ գավառների (Լքանց, Ծալիդեց, Գոյաց, Մարաց, Ռուտակ, Գարափնացիք, Գարդման և Բաղդասական) խելական տեղը, որ մի շարք եվրոպացի հայրագետներ, հատկապես Հյուրչիմանը, շփոթել են այլ գավառների և տեղանքի անունների ներ:

Հայրենագիտական մեծ արժեք են ներկացնում նաև եվրոպացի կովկասագետների և ճանապարհորդների աշխատությունների այն մասերը, որոնք հատկապես վերաբերվում են ընդհանոր Հայաստանին կամ նրա որոշ գավառներին: Այդ տեսակետից ոչագրակ է 1872 թվականին Մայր Աթոռոյի տպարանում հրատարակված զերմանացի ճանապարհորդ բարոն Օգոստոս Ֆոն Հակոտիառոցին «Ճանապարհորդության յայսկոյս Կովկասում այն է ի Հայու և ի Վիրս» գիրքը, որը 1869 թվականին Երնջակի և Արարագետ վանրում թարգմանել է տ. Արխատակես վրդ Սեղրակյանը: Թարգմանիչը գրի սկզբում զետեղած «Ազգ» բաժնում հայտնում է այն միտքը, թե շատ եվրոպացիներ ճանապարհորդելու են ներկ Հայաստան և ապա հրատարակել նոյեր, սակայն հրանցից շատերը, հապենակ տեղեկություններ հավաքելով պատահական մարդկանցից, շատ հաճախ սիարվել են իրենց կարծիքների մեջ, աղավաղել Հայաստանի տեղանքի անունները, մեր պատմությունը, ժողովրդի վարքը ու բարքը ծով համելու մեջ են ներկայացրել գիտական աշխարհին: Այնուհետև Արխատակես վարդապետը իրավացիորեն գրում է, թե ինչու համար մենք չպետք է մեր կյանքը մեր լեզվով, ճշմարտացի և իրական ձևով չըգրենք, որ իման թարգմանում ենք, կարդում ու մենք մեզ ճանաչում օտարի կարծիքով և տեսանկյունով:

Գրում զետեղած է նաև ուստերեն թարգմանության առաջարանը, որտեղ պարզ կերպով նշված է նրա հրատարակման նպատակը, որ է՝ «Երկիր՝ որ յայսկոյս Կովկասու, համարի մի ի գիտառը մասանց Տերութեան Ռուսիոյ. սակայն չիք առ մեզ (առ Ռուսա), մինչ ցարդ օրինառը և անթերի տեղեկություն ինչ զննանք» (Եջ Եյ): Այս գիրքը կոչված է լրացնելու մասամբ այդ բացը: Ռուսերեն առաջարանում զետեղած է նաև Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսի կոնդակը՝ Անիրված Օ. Հակատիառոցին: Հայրենաւեր, Հայրապետը հայն պառղջություն և հաջողություն է, ցանկանում պարոնին, իսկ հետո ամելացնամ է, «...և ապա յայտնել զիարերան շնորհակալիս սրտիս ընդ այդպիսի և արշակ հրազդնեին և ստոյդ տեղեկութիւնն հաղորդեալս ի Քէն զահմանան» (Միաբան) թարգմանում և երկու գրքովկներով

ընդ որս և զհամասեռիցն իմոց, զՀայկան տոմիչն» (Եջ Զ): Այնուհետև Հայոց Հայրապետն իր կոնդակում գնահատում է խելացի, հեռատես և իրերը ճիշտ ընկալող ու գնահատող եվրոպացի ճանապարհորդին, բայց և խոսովանում է նաև, որ՝ «...շատը և այնք եղեն (եվրոպացի ճանապարհորդներ—Ա. Ս.), որը անհիմն և ստերիդ դիտութեամբ պատճառ ետուն ունաց ի թիր կարծի քերկույ ի վերայ երկրիս առնասարակ» (Եջ Է):

Այս բոլորից հետո դրված է հեղինակի առաջարանը, որտեղ կարդում ենք. «Ի բաց առեալ զՀրէսատան, զհնագոյն աշխարհի, կերդուն համաշխարհախոս պատմութեան, և զԵգիպտոս, հատանիմ ասել թէ չիք այլ երկիր, ի ծոց որոյ հնար ինչ իցէ գտանել զայնշափի տեղեկութիւնն կարեռու մարդկային սեփի, որպէս ի կողման տարածեալս ընդ մէջ Սեա ծովու և Կասպիականին. ի միջի որոց զգլուս ամբանայ գեղադիտակ լեան Արարատ» (Եջ Թ):

Օ. Հակատիառոցինը բարձր է գնահատում Փոքր Ասիայի այս խոլ ու հետամնաց կոչված գավառների ճարտարապետական կոթողները և, բարձրելով բարելական, սառական, պարսկական, հոնական և հոռմանական մեծամեծ կառուցները, դրանք համեմատելով մեր կառուցդական արվեստի հետ, եզրակացնում է. «...այլ լաւագոյն բան զամենացն տեսանին հնադարեան հրաշակառոց նկանացիք բրիսուննեից՝ և կիսամեր դրեսակը՝ ի գոանիս բարանց, գործք միջին դարուց» (Եջ ԻԱ): Իսկ խոսելով Կովկասի ժողովրդների վարք ու բարքի, սովորույան, ազգային ստածերի, սացգածքների, հերգ-երաժշտության և ավանդույթների մասին, նաև ընդգծում է. «...ամբաս կարեն մատակարարել մեզ հնիթս գիտութեան. որոց հետազոտությն լոյս մեծ կարէ սփոռել և ի վերայ կողմանց ինչ երոպիոյ» (Եջ ԻԲ):

Վերևում տեսանք, որ Օ. Հակատիառոցինի սոյն գիրքը բարձր է գնահատութեալ ինչպես միապետության, այնպես էլ հայ մնապորականության, հատկապես Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսի կողմից, դրա վառ ապացուցն է Նրա կոնդակը:

Մեզ թվում է, որ հեղինակն իր գրքի բարձրը աղթանիքների համար պարտական էր հայ մեծ լուսավորիչ Խ. Արովյանին, որի տունն էր ժամանել Հակատիառոցինը և նրա ողեկցությամբ շրջել ու գերմաներեն մաքրութեալով գիտական ճշմարիտ բացատրություններ ստացել մեր երկրի ու ժողովրդի մասին:

1890-ական թվականներին Մայր Աթոռի միաբան Գաղուտ Տեր-Մկրտչյանը (Միաբան) թարգմանում և երկու գրքովկներով

լուս է ընծայում ֆրանչիացի հոչակավոր աշխարհագրագետ Էլիզե Ռեկլյուի 9 հաստորանց աշխատության այն մասերը, որոնք վերաբերում են Հայաստանին և նայ ժողովրդին: Սուաշին գրքովիքը (1890 թ. հրատարակված) կոչվում է «Թուսական Հայաստան կամ Արաքսի աւազան», իսկ երկրորդը՝ (1893 թ. հրատարակված) «Հազիստան, Հայաստան և Քորդիստան»:

Երկրորդ գրքովիքի առաջարանում Միարանք գրում է, որ մենք ճոխ գրքեր ունենք Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ, ինչպես օրինակ հայր Դ. Ալիշանի երկերը, սակայն դրանք հնախոսական են, գեղեց ոչ մատչելի և շատերին անհամականի, ուստի՝ «Այս մեծ պակասը լրացնելու համակնությունը չունինք այս երկու փոքրիկ հատորներով, այլ յոյս ունինք միայն նոր աճող սերնդի մէջ թիշ թէ շատ հնատարքութիւն լարուցանել՝ ծանօթանալու հայրենիքն, ճանաչելու այն երկերը, որի մէջ ապրում ենք մենք և մեր ցեղակիցներն ու մշտական դրացիները»:

Կարելի է գրեթե դրապէս պնդել, —ասում է առ, —թէ ով չէ ճանաչում իր հայրենիքը՝ մա չէ կարող և նրան սիրել» (Էջ Բ):

Է. Թեկյուն ճշմարտացի կերպով է նկարուագրում Հայաստանը, նրա գավառները, պատմական հուշարձանները, լեռները, գետերը, լեռը, ըստ արժանակոյն զնահատում է մեր տաղանդավոր և աշխատաւեր ժողովրդի անցյալի և ներկայի բարքերը, նրա լուսավոր ոգին, ազատատենչ ձգտումները: «Ներկայումս հայերը, —գրում է առ, —մեծապէս նախանձախնդիր իրենց ընտանեաց, ջանք են գործ դնում իրենց որդիներին ուսման առավելությունները մատակարարելու և չկայ հասարակութիւն, որ դպրոց չունենայ կամ չպահէ...: Գիտական և գրական շարժումը շատ զօրեղացել է և հայերը, համեմատած իրենց թուին, ամրող ոուս կայսերութեան մէջ թերեւս առաջին ազգն են գիրք տպելում: ...Պատմում են ճանապարհորդերը որ Անատոլիայի խորքերում անգամ հանդիպում են ֆրանսագէտ հայերի, որ ծաօթ են ֆրանչիական գրականութեան» (գիրք Ս, Էջ 47—48):

Է. Թեկյուն իրավացիորեն հակադրվում է վերոպացի մի շարք գիտնականների և ճանապարհորդների այն կարծիքին, ըստ որի Օրանք տեղյակ չլինելով մեր ժողովրդին, Օրանք վերնագրում են տարբեր տեսակի վաս հատկանիշներ: «Նա այս առիթով գրում է. «Այնու ամենայնի, առանց մեծ չափազանցոթեան կարելի է նայ գյուղացուն վերագրել Տուրքիայի ասածը. «Հայերը աշխարհի ամենապահ և ամենաազգնի ժողովուրդն են»,

կամ Բայրոնի ասածը թէ՝ «Հայերի առարինութիւնը իրենցն է, իսկ մոլութիւնը ուրիշներից առած» (Էջ 55):

Սակայն պետք է նշել, որ ինչպես բազմաթիվ նվորապացի արևելագետների և ճանապարհորդների երկերը, այնպէս էլ Էլիզե Ռեկլյուի ստորագրությունը զերծ չէ թերություններից, որոնց մասին Միարանք երկրորդ գրքովիքի 67-րդ էջում «Թարգմանչի ծանօթութիւնները» վերնագրի տակ մանրամասնորեն խոսում է և բացահայտում ճշշմարտությունը: Այդ թերություններից են՝ հայոց լեզվի, Հայաստանում ատրիւսակիրական կարգերի, հայերի թվի, երկրի տեղանունների, տարածքի, ժողովուրդների, դրանց կրոնների, վարք ու սարքի մասին արտահայտած մի շարք սխալ կարծիքներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը:

Մայր Աթոռի տպարանի ինչպես նայենագիտական, այնպէս էլ մյուս հրատարակությունների գործում անգամհատելի ծառայություն են մատուցել Մայր Աթոռի միարանքները, որոնք անցնելով զավադից գալստ, գյուղից գյուղ, կրելով բազմաթիվ տառապանքներ, նկարագրել են, նավազել, զրի առել ու կորատից փրկել են մեր ժողովրդի Եշիմարդերը և հիմք դրել հայրենագիտությանը, հայագիտությանը և ազգագրությանը:

Հայ մեծանուն բանասեր և արվեստագետն Տ. Գարեգին կաթողիկոս Հովհանիսցը մի առիթով գրել է. «Հայագիտության և նայենագիտության ծագման և զարգացման մեջ Եշիմածինը շատ կարևոր դեր է կատարել, որ գրեթե անտեսված է մեր մտավորուկանության կողմից: Ալիշանի «Ծիրակ»-ը, «Այրարատ»-ն ու «Սյունիք»-ը իրենց կարևորագույն մատով միմնալով են Եշիմածինի միարանքների աշխատությունների կամ նրանց թերած օգնության վրա: Ծահմարտունյանի, Սարգիս Եպիսկոպոս Զալայանի, Ստեփան Վարդան Միթթարյանի, Սմբատյան Մեսրոպ և Բարիստարյան Մակար Եպիսկոպոսների և Քաջքերունու ճանապարհորդական նկատողությունները, որ տպագրվեցան «Արարատ»-ի մէջ, նաև հետագա միարանքներից ումանց գործերը միմքը են երկան հայրենագիտության և աղբյուրները մեր անցրած շինարարության, այսինքն ուսումնասիրության ճարտարագետների և ճանապարհորդական համապարհության կատարած առնմաններ և համար Եշիմածինի կատարած առնմաններից հայության երախտագիտության արժանի գործը հազարավոր ձեռագիրների հավաքումն ու պահպանությունն է, նայ ժողովրդի ամենամեծ ժառանգությունը, հարստությունը: Առանց այսպիսի հարստու-

թյան արևելահայ բանասիրության մասին երազել անգամ կարելի չէր»<sup>2</sup>:

Չափազանց լայն են Մայր Աթոռի տպարանի գործունեության շրջանակները: Գիտությունների և արվեստների մեջ չկա մի

<sup>2</sup> Յ. Օշական, Արևելահայ բանասիրութիւնը և Եջմիածն, Ամրիխաս, 1948, վերջարան, էջ Դ—Ե (վերջարանը գրել է Տ. Տ. Գարեգին կաթողիկոս Հովհաննիսը):

ասպարեզ, որի վերաբերյալ գիրք կամ առանձին հոդված լույս տեսած չինի այստեղ, մասնաւոնդ «Արարատ»-ի էջերում: Մայր Աթոռի տպարանը հայ մշակույթի, մասնավորապես մեր հայունագիտության զարգացման ճանապարհին կատարել է չափազանց շնորհակալ գործ, որն արժանի է հայ սերունդների երախտագիտությամբ և հարզանքին:

